«ՇՏԻԳԵՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025թ.

ԵՐԵՎԱՆ 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն) 7

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 8

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 9

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 10

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 11

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
22 Հանրապետության փող.
0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. +374(10) 544-301/307/309
Էլ. փոստ: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

29.05.2026թ.
N 032614

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վահե Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ մասնակցին

Վերապահումով կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Շտիգեն» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (հետայսու՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների (հետայսու՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական հոսքերը՝ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Խումբը չի իրականացրել պաշարների գույքագրում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և մենք չկարողացանք ստանալ բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ պաշարների առկայության և վիճակի վերաբերյալ այլընտրանքային աուդիտորական ընթացակարգերի միջոցով: Ֆինանսական հաշվետվություններում պաշարները ներկայացված են 1,097,028 հազար դրամ գումարով: Հետևաբար մենք չկարողացանք որոշել, թե անհրաժեշտ էին արդյոք ճշգրտումներ պաշարների, վաճառքի ինքնարժեքի և ֆինանսական հաշվետվությունների այլ տարրերի նկատմամբ:

ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX
Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների 19-րդ ծանոթագրությանը, որտեղ նկարագրված է, որ Խումբը 2025 թվականի ընթացքում կրել է էական վնասներ և հաշվետու ամսաթվի դրությամբ ունի կուտակված վնասներ, ինչի արդյունքում առկա է էական անորոշություն, որը կարող է կասկած հարուցել Խմբի անընդհատ գործունեության շարունակման վերաբերյալ: Մեր կարծիքը չի փոփոխվել այս հարցի առնչությամբ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Խումբն կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա: ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և

իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Խմբի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Խումբն կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Սեդրակ Բաղալյան

Աուդիտոր

29 մայիսի 2026թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	286,499	298,823
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ		-	53,522
Ոչ նյութական ակտիվներ		38,975	95,060
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		55,250	40,750
Բանկային ավանդներ	5	200,000	132,414
Հետաձգված հարկային ակտիվներ	6	139,539	133,135
Ներդրումներ այլ կազմակերպություններում		89,079	436,548
Տրված փոխառություններ	7	2,899	70,360
		812,241	1,260,612
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	1,097,028	1,460,646
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	473,811	922,870
Բանկային ավանդներ	5	799	199,729
Տրված փոխառություններ		-	18,085
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10	118,771	50,940
		1,696,466	2,652,270
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		2,508,707	3,912,882

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կապիտալ և պահուստներ	11		
Կանոնադրական կապիտալ		100,050	100,050
Կուտակված վնաս		(836,156)	(320,447)
Վերագնահատման պահուստ		29,472	79,508
Լրացուցիչ կապիտալ		16,407	392,124
Էմիսիոն վնաս		-	(11,699)
Արտարժույթի փոխարկման պահուստ		-	127
Փոքրամասնության բաժնեմաս		(4,822)	6,248
		(695,049)	245,911
Երկարաժամկետ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	12	1,040,270	554,763
Վարձակալության զծով պարտավորություն		-	42,122
		1,040,270	596,885
Կարճաժամկետ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	12	442,676	890,944
Վարձակալության զծով պարտավորություն		-	17,608
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	1,720,810	2,158,271
Շահութահարկի զծով պարտավորություն		-	3,263
		2,163,486	3,070,086
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		2,508,707	3,912,882

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. մայիսի 27-ին:

Հայկ Շեկյան
Տնօրեն

Սերգեյ Մարության
Ֆինանսական տնօրեն

1-26 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	14	3,792,843	10,620,619
Վաճառքի ինքնարժեք	15	(2,692,809)	(8,884,113)
Համախառն շահույթ		1,100,034	1,736,506
Այլ եկամուտ		94,386	51,621
Իրացման ծախսեր	16	(768,520)	(1,232,969)
Վարչական ծախսեր	17	(584,874)	(826,623)
Այլ ծախսեր		(257,293)	(288,235)
Գործառնական գործունեությունից վնաս		(416,267)	(559,700)
Ֆինանսական եկամուտ/(ծախս), զուտ		(131,815)	(67,422)
Այլ ֆինանսական հոդվածներ		19,500	21,833
Վնաս մինչև հարկերը		(528,582)	(605,289)
Շահութահարկի գծով փոխհատուցում	18	12,873	98,608
Տարվա վնաս		(515,709)	(506,681)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Ոչ նյութական ակտիվների վերգնահատումից աճ		35,941	-
Շահութահարկի գծով ծախս		(6,469)	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(486,237)	(506,681)

1-26 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	Էմիսիոն վնաս	Վերագնահատման պահուստ	Լրացուցիչ կապիտալ	Արտարժույթի փոխարկման պահուստ	Փոքրամասնության բաժնեմաս	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	50	190,233	-	-	-	-	(1,253)	189,030
Տարվա վնաս	-	(510,680)	(11,699)	-	-	127	3,999	(518,253)
Ներդրման իրական արժեքով վերաչափում	-	-	-	-	392,124	-	-	392,124
Ոչ նյութական ակտիվների վերագնահատում	-	-	-	79,508	-	-	3,502	83,010
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(510,680)	(11,699)	79,508	392,124	127	7,501	(43,119)
Թողարկված կանոնադրական կապիտալ	100,000	-	-	-	-	-	-	100,000
Գործարքներ սեփականատերերի հետ	100,000	-	-	-	-	-	-	100,000
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100,050	(320,447)	(11,699)	79,508	392,124	127	6,248	245,911
Տարվա վնաս	-	(515,709)	11,699	-	-	(127)	(11,070)	(515,207)
Ներդրման իրական արժեքով վերաչափում	-	-	-		(375,717)	-	-	(375,717)
Ոչ նյութական ակտիվների վերագնահատում	-	-	-	(43,567)	-	-	-	(43,567)
Հետաձգված շահութահարկ	-	-	-	(6,469)	-	-	-	(6,469)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(515,709)	11,699	(50,036)	(375,717)	(127)	(11,070)	(940,960)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100,050	(836,156)	-	29,472	16,407	-	(4,822)	(695,049)

1-26 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Տարվա վնաս	(515,709)	(506,681)
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	104,524	172,138
Դեբիտորական պարտքերի պահուստ	27,728	-
Հիմնական միջոցների օտարում	26,680	294
Ֆինանսական ծախս	131,815	67,422
Պահուստներում փոփոխություններ	28,939	102,872
Շահութահարկի գծով փոխհատուցում	(12,873)	(89,087)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(19,500)	(21,833)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	(228,396)	(274,875)
Փոփոխություններ՝		
Պաշարներում	363,618	(44,017)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերում	449,059	145,143
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում	(437,461)	545,224
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր	146,820	371,475
Վճարված շահութահարկ	(3,263)	(95,102)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	143,557	276,373
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(23,773)	(43,766)
Ներդրումներում փոփոխություններ	(375,717)	-
Փոխառությունների տրամադրում	79,489	(39,704)
Ավանդների հավաքագրում/(ներդրում)	131,344	(262,141)
Ստացված տոկոսային եկամուտ	114,384	73,091
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր	(74,273)	(272,520)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Ստացված/(մարված) վարկեր, զուտ	(20,953)	36,547
Ֆինանսական գործունեությունից/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական հոսքեր	(20,953)	36,547
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	48,331	40,400
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների վրա	19,500	427
Դրամական միջոցները տարեսկզբին	50,940	10,113
Դրամական միջոցները տարեվերջին	118,771	50,940

1-26 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Շտիգեն» ՍՊԸ (հետայսու՝ «Մայր ընկերություն») և նրա դուստր ընկերությունների՝ «Անդրոն» ՓԲԸ, «Շտիգեն Ընվայզրի» ՍՊԸ, «Չինարէն» ՍՊԸ և Վրաստանում գործող՝ «Շտիգեն Գրուփ» ՍՊԸ (բոլորը միասին հետայսու՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները :

Մայր Խմբին են պատկանում «Անդրոն» ՓԲԸ՝ բաժնետոմսերի 100%, «Շտիգեն Գրուփ» ՍՊԸ՝ 95%, «Չինարէն» ՍՊԸ՝ 90% և «Շտիգեն Ընվայզրի» ՍՊԸ՝ 51%: Խմբին են պատկանում նաև Շտիգեն Վենչուրս ՓԲԸ-ի բաժնետոմսերի 30% : Վերջինս դասակարգվել է որպես մայր Խմբի հետ ասոցիացված կազմակերպություն:

«Շտիգեն» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2011թ-ին Հայաստանի Հանրապետության օրենքների ներքո՝ ՀՀ քաղաքացի Հայկ Վալերիկի Շեկյանի կողմից : Խմբի գրամցման հասցեն է՝ 0033, ՀՀ ք. Երևան, Վիկտոր Համբարձումյան 119, բն 23:

Մայր Խմբի գործունեության հիմնական նպատակը խնայող և անվտանգ արևային էներգետիկ համակարգերի կառուցումն է: Խումբն նախագծել, կառուցել և սպասարկում է տարածաշրջանի խոշորագույն արևային ջերմային կայանը (Grand Sport), ինչպես նաև Հայաստանի խոշորագույն արևային էլեկտրակայանները (Masrik 1, ArSun, Solar 5 և այլն), 2025թ. սկսել և 2026թ. առաջին կեսին ավարտին է հասցրել Վրաստանի Ռուսթավի քաղաքում 23.9 ՄՎտ հզորությամբ արևային կայանի նախագծումը և կառուցումը:

Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետության տնտեսությանը և ֆինանսական շուկային բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ և միտված են բարելավման վերջին տարիների ընթացքում:

Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարատև ռազմական հակամարտությունը թեակոխել է հակամարտության կարգավորման փուլ: Երկու երկրների միջև խաղաղ բանակցությունները և սահմանազատման գործընթացը դեռ ընթացքի մեջ են, ինչը կարող է որոշակի անորոշություն ստեղծել բիզնես միջավայրում:

Վերջին տարիներին Հայաստանի տնտեսությունը հաջողությամբ դիմակայել է համաշխարհային տնտեսական ցնցումներին և կարողացել է գրանցել տպավորիչ մակրոտնտեսական ցուցանիշներ: 2025թ-ին տնտեսական ակտիվության բարձր մակարդակը շարունակաբար նպաստել է մակրոտնտեսական ցուցանիշների աճին: Նշված գործոնները հանգեցրել են ՀՆԱ-ի 7.2% աճի 2025թ-ին (2024թ-ին՝ 5.9%): Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) ուսումնասիրության համաձայն՝ տնտեսության վերականգնումը կշարունակվի, թեպետ ավելի դանդաղ տեմպերով: 2025թ. Հուլիսին «Standard & Poor's» վարկանիշային գործակալությունը վերահաստատել է Հայաստանին շնորհված BB- վարկանիշ՝ կայուն հեռանկարով: Նմանապես, «Fitch» վարկանիշային գործակալությունը վերահաստատել է Հայաստանին շնորհված BB- վարկանիշը՝ կայուն հեռանկարով:

Կառավարության 2021-2026թթ. Տնտեսական ծրագիրը նպատակ ունի խթանել արտահանմանը միտված և ներդրումների վրա հիմնված աճի մոդելը լայնածավալ բարեփոխումների միջոցով,

մասնավորապես խմբի հիմնական գործունեության ուղղությունը՝ վերականգնվող էներգետիկայի ոլորտը, հռչակված է որպես ռազմավարական ուղղություն և կառավարության կողմից պարբերաբար իրականացվում են ոլորտի զարգացմանն ուղղված քայլեր: Կառավարության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը սահմանում է վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման նոր նշաձողեր, մասնավորապես ծրագրով նախատեվում է մինչև 2030 թվականը նպաստել 1000 ՄՎտ հզորությամբ արևային կայանների կառուցմանը: Անհրաժեշտ է նշել, որ Կառավարության հռչակած նշված թիրախները ապահովվել են արդեն 2025թ 3րդ եռամսյակում, որի հետևանքով աջակցության ծրագրի էական կարևոր բաղադրիչը՝ ֆիզիկական անձանց կողմից արևային կայանների ծեռքբերման նպատակով վարկերի տոկոսների սուբսիդավորման ծրագիրը դադարեցվել է: Վերջինիս հետևանքով ոլորտում առաջացել է խորը ճգնաժամ, որը արտահայտվել է պահանջարկի կտրուկ անկմամբ:

Չնայած վերոնշյալ բացասական հանգամանքի, Կառավարությունը վերահաստատել է ոլորտին աջակցության իր կամքը և նախատեսում է 2026թ. երկրորդ կիսամյակում իրականացնել կուտակիչ կայանների, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի մեծածավալ աջակցություն: Կառավարության աջակցության այս ուղղությունները մեծապես պայմանավորված են լինելու հետևյալ հանգամանքներով.

- ներկրվող էներգակիրների գնաճի սպասումներ,
- կարևոր նշանակությունն է ունեցել մի շարք միջազգային իրադարձությունները՝ ԵՄ խորհրդաժողով, ԱՄՆ և Չինաստանի հետ ռազմավարական համաձայնագրերը,
- տվյալների կենտրոնների նկատմամբ պահանջարկի աճը, որն իրենց հերթին կտրուկ խթանում են մաքուր էներգետիայի պահանջարկը:

Ոլորտի ճգնաժամով պայմանավորված Մայր ընկերության գործունեությունն ըստ էության 2025թ. ընթացքում ցնցվել է: Ճգնաժամի հաղթահարման նպատակով Մայր ընկերությունը ձեռնարկել է մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ վերակառուցել ու բարեփոխել է կառավարման համակարգը, իրականցրել է ծախսերի կրճատում, գործունեության արդյունավետության բարձրացում: Ներկայումս աշխատում է վերակապիտալացման ուղղությամբ՝ ոլորտի սպասվող բուռն աճն առավելագույնս օգտագործելու համար:Խմբի ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Խումբն պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՔԵՐ

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Համախմբված հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով (բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության) և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 21-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. Հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. Հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում»* ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)
- *«Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)
- *«Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում»* (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)
- *«Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություն)

Բացառությամբ ՀՀՄՍ 1 փոփոխությունների և ստորև ներկայացված ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ի՝ *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*, փոփոխությունների, մյուս ստանդարտներ և փոփոխություններ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2 *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*

ՀՀՄՍ 1 փոփոխությունները և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ը տրամադրում են ուղեցույց և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառելու էականության վերաբերյալ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բացահայտելիս: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին տրամադրել ավելի օգտակար տեղեկատվություն հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին՝ փոխարինելով հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականության բացահայտման պահանջը հաշվապահական հաշվառման «էական» քաղաքականության բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպությունները կիրառեն էականության հայեցակարգը:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

«Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)

«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

ՖՀՄՍ 18 «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

3 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 381.36 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 449.01 դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 413.89 դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն գինը, ներառյալ ներմուծման տուրքերը և չվերադարձվող գնման հարկերը և այլ ուղղակիորեն վերագրելի ծախսերը: Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Արտադրական, վարձակալության կամ վարչական նպատակներով կամ դեռևս չորոշված նպատակներով շինարարության ընթացքում գտնվող գույքը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած ճանաչված արժեզրկման կորուստը: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսերը, տեղանքի նախապատրաստման, տեղադրման և հավաքման ծախսերը, մասնագիտական վարձատրությունը, իսկ որակավորվող ակտիվների համար՝ փոխառության ծախսերը, որոնք կապիտալացվել են Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Վարձակալության ենթակա շենքերը նույնպես ներառվում են հիմնական միջոցների մեջ, եթե դրանք պահվում են ֆինանսական վարձակալության պայմանագրով: Նման ակտիվները ամորտիզացվում են իրենց սպասվող օգտակար ծառայության ընթացքում (որոշվում է համեմատելի սեփականության ակտիվների հիման վրա) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե այն ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրվող բաղադրիչի հաշվեկշռային արժեքով: Հետագա այլ ծախսումները կապիտալացվում են, եթե այդ ծախսումներից ապագա տնտեսական օգուտներ են ստացվելու: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ վերանորոգման և սպասարկման ծախսերը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածությունը սկսվում է, երբ ակտիվները հասանելի են օգտագործման համար:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում, որը հաշվապահական հաշվառման ծրագրերի ապահովման համար կազմում է 10 տարի:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվները չեն ենթարկվում ամորտիզացիայի և տարեկան ստուգվում են արժեզրկման համար: Ամորտիզացիայի ենթակա ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները ցույց են տալիս, որ հաշվեկշռային արժեքը չի կարող վերականգնվել:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն գումարի համար, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա վերականգնելի գումարը:

Վերականգնելի գումարը զուտ վաճառքի գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի վերականգնելի գումարը գնահատվում է պակաս դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամական միջող միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա վերականգնելի գումարը: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են որպես ծախս անմիջապես, եթե համապատասխան ակտիվը չի հաշվառվում վերագնահատված գումարով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատման նվազում:

Երբ արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի հաշվեկշռային արժեքը մեծացվում է մինչև դրա վերականգնելի գումարի վերանայված չափը, բայց այնպես, որ ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի կամ դրամական միջոց ստեղծող միավորի համար ճանաչված արժեզրկումից կորուստ չճանաչվեր: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, եթե համապատասխան ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատման աճ:

3.5 Պաշարներ

Պաշարները ակտիվներ են, որոնք պահվում են վաճառքի համար սովորական գործունեության ընթացքում կամ նյութերի կամ պարագաների տեսքով՝ արտադրության գործընթացում կամ ծառայությունների մատուցման ժամանակ սպառվելու նպատակով: Պաշարներ են ճանաչվում նաև այնպիսի իրեր, ինչպիսիք են պահեստամասերը, պահեստային սարքավորումները և սպասարկման սարքավորումները, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և զուտ իրացման արժեքից նվազագույնով: Զուտ իրացման արժեքը սովորական գործունեության ընթացքում գնահատված վաճառքի գինն է՝ հանած ավարտման և իրացման գնահատված ծախսերը: Պաշարների արժեքը հիմնված է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքի վրա և ներառում է պաշարների ձեռքբերման և դրանց առկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված ծախսերը:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով։

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները։

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում։ Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 22-ում։

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին և դասակարգված չեն որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ։

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։ Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում։ Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը։

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Խումբն հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ։ Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը։ Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից։

Խումբն գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից։

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբն դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, վարձակալության գծով պարտավորությունները: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 22-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Սեփական կապիտալ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնեմասերի նոմինալ արժեքը:

Կուտակված շահույթը/(վնասը) ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը/(վնասը):

Վերագնահատման պահուստը ներկայացնում է ոչ նյութական ակտիվների վերագնահատման արդյունքում առաջացած աճը:

Լրացուցիչ կապիտալը ներկայացնում է որպես ֆինանսական գործիք դասակարգված ներդրումների իրական արժեքով վերագնահատումից առաջացած աճը:

Սեփականատիրոջ հետ բոլոր գործարքներն առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.8 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբն վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.9 Հասույթ

Հասույթը ճանաչվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Խմբի կողմից տրամադրված ցանկացած առևտրային զեղչերը:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբն բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

4 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հազար դրամ	Հող, շինություններ	Մեքենա-սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատնտեսական գույք	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	157,461	68,471	82,539	122,829	431,300
Ավելացում	-	7,409	16,671	10,616	9,070	43,766
Օտարում	-	(272)	-	(50)	(383)	(705)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	164,598	85,142	93,105	131,516	474,361
Ավելացում	65,534	2,787	349	944	(6,819)	62,795
Օտարում	-	(21,576)	(13,584)	(5,403)	(994)	(41,557)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	65,534	145,809	71,907	88,646	123,703	495,599
Կուտակված մաշվածություն						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	35,534	17,768	37,380	21,734	112,416
Տարվա հաշվարկ	-	30,325	8,740	17,748	6,720	63,533
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(21)	-	(35)	(355)	(411)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	65,838	26,508	55,093	28,099	175,538
Տարվա հաշվարկ	639	28,699	9,266	5,542	4,293	48,439
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(7,288)	(3,953)	(2,649)	(987)	(14,877)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	639	87,249	31,821	57,986	31,405	209,100
Հաշվեկշռային արժեք						
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	98,760	58,634	38,012	103,417	298,823
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	64,895	58,560	40,086	30,660	92,298	286,499

Հիմնական միջոցների մաշվածության ծախսը բաշխվել է իրացման ծախսերին՝ 7,552 հազար դրամ, վարչական ծախսերին՝ 40,887 հազար դրամ (2024թ.՝ իրացման ծախսերին՝ 8,815 հազար դրամ, վարչական ծախսերին՝ 54,718 հազար դրամ)։ Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի հիմնական միջոցները՝ 68,293 հազար դրամ սկզբնական արժեքով գրավադրվել են բանկերում որպես ապահովման միջոց։ Խմբի հիմնական միջոցներում ներառված HOZON NETA U PRO մակնիշի ավտոմեքենան՝ 13,500 հազար դրամ սկզբնական արժեքով, գրավադրված է «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ում՝ որպես վարկի գծով ապահովման միջոց։

5 ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

Հազար դրամ

		2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Տոկոսադրույք	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս
Այ Դի Բանկ ՓԲԸ	11.3%	200,000	799
		200,000	799

Հազար դրամ

		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Տոկոսադրույք	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս
Արմսվիսբանկ ՓԲԸ	9.9%	72,000	2,111
Արմսվիսբանկ ՓԲԸ (Էներէքս)	9.9%	245,415	12,617
		317,415	14,728

6 ՀԵՏԱՁԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	133,135	30,307
Սեփական կապիտալում ճանաչված	(6,469)	-
Շահույթում կամ վնասում ճանաչված (տե՛ս ծանոթ. 18)	12,873	102,828
Տարեվերջի մնացորդ	139,539	133,135

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. հունվարի 1	Սեփական կապիտալում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31
Հատուցումներ աշխատակիցներին	40,985	-	7,882	48,867
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	-	4,991	4,991
Երաշխիքային սպասարկման գծով պահուստ	2,368	-	-	2,368
Վերագնահատում	-	(6,469)	-	(6,469)
Հարկային վնաս	89,782	-	-	89,782
	133,135	(6,469)	12,873	139,539

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
Հատուցումներ աշխատակիցներին	22,375	18,610	40,985
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,564	(5,564)	-
Երաշխիքային սպասարկման գծով պահուստ	2,368	-	2,368
Հարկային վնաս	-	89,782	89,782
	30,307	93,307	133,135

7 ՏՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար դրամ			2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Մարման ժամկետ	Տոկոսադրույք	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս
Ֆիզիկական անձիք	30.08.2025	13.75%	7,700	549
Իրավաբանական անձիք	ցպահանջ	13.75%	600	7
			8,400	556

8 ՊԱՇԱՐՆԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապրանքներ	259,007	362,927
Անավարտ արտադրություն	38,426	6,849
Հումք և նյութեր	799,595	1,090,870
	1,097,028	1,460,646

9 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	225,491	688,492
Պարտքային կորուստների գծով պահուստ	(27,728)	-
	197,763	688,492
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	197,031	164,328
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	52,815	49,889
Այլ	26,202	20,161
	276,048	234,378
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	473,811	922,870

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 22 օր (2024թ.՝ 24 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Խմբի՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար: Արժեզրկված առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում բիզնես-բիզնես շուկայում աշխատող հաճախորդներից են, որոնք ունեն ֆինանսական դժվարություններ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի համար կորուստի գծով պահուստի մնացորդը համադրվում է տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ

	2025թ.	2024թ.
Կորուստների գծով պահուստը տարեսկզբի մնացորդ	-	10,675
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	27,728	-
Տարվա ընթացքում չօգտագործված պահուստի հակադարձում	-	(10,675)
Կորուստների գծով պահուստը տարեվերջի մնացորդ	27,728	-

23 ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս ծանոթագրություն 23 (ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

10 ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	9,424	4,922
Բանկային հաշիվներ	109,347	36,018
Սառեցված հաշիվներ	-	10,000
	118,771	50,940

11 ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

11.1 Կանոնադրական կապիտալ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ 2025թ.	Կանոնադրական կապիտալ 2024թ.
1 բաժնեմաս	100,050	100,050

Մայր ընկերության միակ մասնակիցն է ՀՀ քաղաքացի Հայկ Շեկյանը: Կանոնադրական կապիտալն ամբողջությամբ վճարված է:

12 ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային Վարկեր	392,123	1,057,884
Փոխառություններ	136,727	270,502
Պարտատոմսեր	885,715	-
Լիզինգ	68,381	117,321
	1,482,946	1,445,707

13 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	203,739	795,544
Ստացված կանխավճարներ	786,458	926,102
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	401,878	188,299
Փոխհատուցումներ աշխատակիցներին	319,265	229,392
Երաշխիքային սպասարկման գծով պահուստ	-	13,153
Այլ	9,470	5,781
	1,720,810	2,158,271

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Խմբի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 23-ում:

14 ՀԱՍՈՒՅԹ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների իրացումից	3,394,611	10,428,085
Ծառայությունների մատուցումից	398,232	192,534
	3,792,843	10,620,619

15 ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նյութեր	1,930,012	3,339,013
Էլեկտրաէներգիայի ինքնարժեք	-	4,099,265
Ապրանքների ինքնարժեք	308,811	490,948
Ծառայությունների ձեռքբերում	157,267	3,003
Փոխհատուցումներ աշխատակիցներին	296,719	951,884
	2,692,809	8,884,113

16 ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ինֆորմացիոն ծառայություն	200	64,218
Գովազդի և մարկետինգի ծախսեր	21,997	53,315
Անդամավճարներ	1,660	27,123
Տրանսպորտային ծախսեր	28,835	42,213
Փոխհատուցումներ աշխատակիցներին	528,541	772,732
Վարձակալական ծախսեր	35,665	46,138
Մաշվածություն	48,659	8,815
Ապահովագրական ծախսեր	375	2,415
Այլ	102,588	216,000
	768,520	1,232,969

17 ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցումներ աշխատակիցներին	384,282	476,567
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	33,362	44,374
Բանկային ծախսեր	7,701	24,818
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	46,007	27,537
Փոստի և հաղորդակցության ծախսեր	3,674	8,934
Մաշվածություն և ամորտիզացիա	9,087	75,298
Վարձակալական ծախսեր	27,777	33,226
Տրանսպորտային ծախսեր	-	-
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	8,676	37,807
Հարկերի գծով ծախսեր	7,567	32,988
Այլ	56,741	65,074
	584,874	826,623

18 ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	-	4,220
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթ. 6)	(12,873)	(102,828)
	(12,873)	(98,608)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Վնաս մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	(528,582)		(605,289)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	(95,145)	18.0	(108,952)	18.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	82,272	(15.6)	10,344	(1.7)
Շահութահարկի գծով փոխհատուցում	(12,873)	2.4	(98,608)	16.3

19 ԱՆԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Խմբի ղեկավարությունը գնահատել է Խմբի կարողությունը շարունակելու իր գործունեությունը որպես անընդհատ գործող՝ հաշվի առնելով առկա ֆինանսական և գործառնական պայմանները։

2024 և 2025 ֆինանսական տարիների ընթացքում Խումբը կրել է համապատասխանաբար 506,681 հազար դրամ և 515,709 հազար դրամ վնաս։ Արդյունքում, հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբն ունի կուտակված վնասներ և սեփական կապիտալի նվազում։

Գործող ֆինանսական պայմանները վկայում են այնպիսի հանգամանքների առկայության մասին, որոնք կարող են առաջացնել էական անորոշություն Խմբի անընդհատ գործունեությունը շարունակելու կարողության վերաբերյալ։ Այնուամենայնիվ, ղեկավարությունը կարծում է, որ Խումբն ունի բավարար ֆինանսական ռեսուրսներ և/կամ նախատեսում է իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ (օրինակ՝ ֆինանսավորման ներգրավում, ծախսերի օպտիմալացում, գործունեության վերակազմավորում), որոնք հնարավորություն կտան շարունակել իր գործունեությունը կանխատեսելի ապագայում։

2025 թվականին եկամտի նվազումը պայմանավորված էր ոլորտի լայնածավալ կարգավորման փոփոխությամբ՝ 2025 թվականի երկրորդ կեսին արևային էներգիայի մանրածախ շուկայի սուբսիդավորված հատվածի կտրուկ կրճատմամբ։ Այս փոփոխությունը ոլորտային է, ազդել է շուկայի բոլոր մասնակիցների վրա և կապված չէ Խմբի շուկայական դիրքի կորստի հետ։ Վերլուծությունը ցույց է տալիս, որ ծրագրով չսուբսիդավորված հատվածը ցույց է տվել աճ։

Ղեկավարությունը մշակել և իրականացնում է գործողությունների ծրագիր՝ ուղղված շահութաբերության և դրամական հոսքերի կայունության վերականգնմանը։ Հիմնական ուղղություններից կարելի է նշել.

(ա) պարտքի կարգավորում. 2026 թվականի մայիսի 12-ին դատարանը հաստատել է Մասրիկ-1 նախագծի գլխավոր կապալառուի՝ «ՉԱՅՆԱ ԱՐՄԵՆԻԱ ԷՆԺԻՆԵՐԻՆԳ» ՍՊԸ հետ կնքված հաշտության համաձայնագիրը։ Համաձայնագրի պայմանների համաձայն՝ Խումբը ստացել է 39 նլն ՀՀ դրամ, իսկ մնացած մասը շուրջ 109 մլն ՀՀ դրամ պետք է մարվի մինչև 2026 թվականի օգոստոսի վերջը,

(բ) պարտքի վերակառուցում. 2026 թվականի երկրորդ եռամսյակում համաձայնեցման փուլում է գտնվում խոշոր վարկատու բանկերի նկատմամբ վարկային պարտավորությունների վերակառուցումը՝ համապատասխանեցնելով մարման գրաֆիկը վերանայված դրամական հոսքերին,

(գ) ծախսերի օպտիմալացում. Աշխատավարձի ֆոնդի կրճատում մոտավորապես 60%-ով և առևտրային և վարչական ծախսերի կրճատում: Ծախսերի կրճատումը պայմանավորված է թե՛ Խմբի բիզնես գործընթացների վերանայման արդյունքում արդյունավետության բարձրացմամբ, թե՛ ծախսերի ուղղակի կրճատմաբ,

(դ) կապիտալատար նախագծերի կասեցում. 80 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրակայանի նախագծի զարգացման աշխատանքները կասեցվել են, 2025 թվականի դեկտեմբերից «Շտիգեն Վենչուրս» ՓԲԸ գործունեությունը ժամանակավորապես դադարեցրել է գործունեությունը. Վրաստանում գործունեության շրջանակը վերանայվում է,

(ե) ֆինանսավորման ներգրավում. Խումբը գտնվում է կապիտալի և փոխառու ֆինանսավորման ներգրավման գործընթացում՝ շրջանառու կապիտալի համալրման և համալիր նախագծերի (արևային էներգիա, էներգիայի կուտակման համակարգեր, ջերմային պոմպեր, ճարտարագիտական ծառայություններ) մշակելու նպատակով,

(ե) սեփական կապիտալի վերականգնում. Մայր ընկերության միակ մասնակիցը քննարկում է Ընկերության լրացուցիչ կապիտալիզացիայի հարցը ։

Հաշվի առնելով այս միջոցառումները, ղեկավարությունը կարծում է, որ Խումբն ունի բավարար ֆինանսական միջոցներ և իրատեսական հնարավորություն՝ շարունակելու գործունեությունը կանխատեսելի ապագայում: Հետևաբար, այս ֆինանսական հաշվետվությունները կազմվել են գործունեության շարունակականության հիմունքներով:

20 ՀԵՏՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2026 թվականի մայիսի 12-ին՝ հաշվետվության ամսաթվից հետո, բայց այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվից առաջ, դատարանը հաստատեց Մայր ընկերության և Մասրիկ-1 նախագծի գլխավոր կապալառուի՝ «ՉԱՅՆԱ ԱՐՄԵՆԻԱ ԷՆԺԻՆԵՐԻՆԳ» ՍՊԸ միջև կնքված հաշտության համաձայնագիրը: Համաձայնագրի պայմանների համաձայն՝ Խումբը ստացել է 39 մլն ՀՀ դրամ, մնացած գումարը՝ 109 մլն ՀՀ դրամ, պետք է վճարվի մինչև 2026 թվականի օգոստոսի վերջը: Հաշտության համաձայնագրի արդյունքում Մայր ընկերությունը մինչև 2026թ. օգոստոսի վերջ Մասրիկ-1 նախագծի շրջանակներում ճանաչելու է մոտ 290 մլն ՀՀ դրամ հասույթ իր համապատասխան ինքնարժեքով: Համապատասխան պահանջը ծագել է հաշվետվության ամսաթվից հետո. իրադարձությունը չի ճշգրտվում և չի ազդում 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Համաձայնագիրը բարելավում է Խմբի իրացվելիության դիրքը:

Հաշվետու ամսաթվից հետո, բայց մինչև հաշվետվությունների վավերացումը՝ 2026թ. փետրվարի 28-ին ԱՄՆ և Իսրայելի ռազմական ուժերը հարձակում են սկսել Իրանի վրա, որին հաջորդել են հակահարվածներ տարածաշրջանային տարբեր պետությունների ուղղությամբ: Այս ռազմական էսկալացիան կարող է զգալի հետևանքներ ունենալ Հայաստանի Հանրապետության ողջ տնտեսության վրա, քանի որ շատ նշանակալի են Հայաստանի առևտրատնտեսական կապերը և՛ Իրանի, և՛ ռազմական գործողություններում ներգրավված այլ երկրների հետ:

Խումբը չունի ուղղակի առևտրային գործընկերներ ռազմական գործողություններում ներգրավված տարածաշրջանային երկրներում, սակայն այս հակամարտության լայնամաշտաբ ազդեցությունը կունենա որոշ հետևանքներ նաև Խմբի գործառնությունների վրա: Ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է էսկալացիայի ազդեցությունը Խմբի գործունեության արդյունքների վրա, սակայն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ հնարավոր չէ իրականացնել արժանահավատ քանակական գնահատումներ:

21 ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

21.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

21.2 Կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

Վարձակալություն

- Վարձակալության ժամկետի որոշումը վարձակալության պայմանագրերի համար, որտեղ Խումբն հանդես է գալիս որպես վարձակալ, ինչպես նաև, արդյոք Խումբն հիմնավորապես համոզված է, որ կօգտագործի վարձակալության օպցիոնները:
- Վարձակալության պարտավորության չափման համար օգտագործվող վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի որոշումը:

22 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

22.1 Էական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

22.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեք		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	197,763	688,492
Բանկային ավանդներ	200,000	332,143
Ներդրում ասոցիացված ընկերությունում	89,079	420,141
Տրված փոխառություններ	8,956	88,445
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	118,771	50,940
	614,569	1,580,161

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեք		
Վարկեր և փոխառություններ	1,482,946	1,445,707
Վարձակալության գծով պարտավորություն	-	59,730
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	213,209	801,325
	1,696,155	2,306,762

23 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբն ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են՝ շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Խումբն ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբն կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբն ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Խումբն գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով, եվրոյով և այլ արժույթներով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբիը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

2025թ.

Հազար դրամ Հոդված	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	101,105	7,204
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	58,226	-
	159,331	7,204
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	19,068	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	220,388	35,678
	239,456	35,678
Զուտ դիրքը	(80,125)	(28,474)

2024թ.

Հազար դրամ Հոդված	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5,017	15,833
	5,017	15,833
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	226,254	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	257,423	34,489
	483,677	34,489
Զուտ դիրքը	(478,660)	(18,656)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի և այլ արժույթների նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2024թ.՝ 10%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի, եվրոյի և այլ արժույթների նկատմամբ 10%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	(8,012)	(47,866)	(2,847)	(1,866)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբն վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբն ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները:

2025թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		13.25%	
Մինչև 6 ամիս	101,870	221,338	323,208
6 ամսից մինչև 1 տարի	111,340	221,338	332,678
1 տարուց ավելի	-	1,040,270	1,040,270
	213,209	1,482,946	1,696,155

2024թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		13.25%	
Մինչև 6 ամիս	397,772	454,276	852,048
6 ամսից մինչև 1 տարի	403,553	454,276	857,829
1 տարուց ավելի	-	596,885	596,885
	801,325	1,505,437	2,306,762

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը ցածր են, քան անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

24 ԿԱՊԻՏԱԼԻ ՌԻՍԿ

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Խմբի կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Խմբի վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Խումբն կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների

փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Խումբն կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Խումբն վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

Հազար դրամ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Զուտ պարտք		
Փոխառություններ	1,482,946	1,445,707
Հանած՝ ստորադաս վարկ	-	64,119
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(118,771)	(50,940)
	1,364,175	1,458,886
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	(695,049)	245,911
Գումարած՝ ստորադաս վարկ	-	64,119
	(695,049)	310,030
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	(1.96)	4.71

25 ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

25.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբն չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբն համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

25.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

26 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐ

Խմբի կապակցված կողմերը ներառում են՝ հիմնական ղեկավար անձնակազմը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, ասոցիացված ընկերությունը: Խումբը կազմված է հետևյալ դուստր և ասոցիացված ընկերություններից՝

- «Անդրոն» ՓԲԸ 100%,
- «Շտիգեն Գրուփ» ՍՊԸ 95%,
- «Շտիգեն Ընվայզրի» ՍՊԸ 51%,
- «Չինարէն» ՍՊԸ 90%
- Շտիգեն Վենչուրս ՓԲԸ 30%:

26.1 Վերահսկողություն

Մայր ընկերության միակ մասնակիցն է ՀՀ քաղաքացի Հայկ Շեկյանը (100% բաժնեմաս):

26.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Խմբի հետ ասոցիացված «Շտիգեն Վենչուրս» ՓԲԸ-ն 2025թ. դեկտեմբերից ժամանակավորապես դադարեցրել է գործունեությունը: Խումբը ասոցիացված ընկերության հետ կատարել է գործարքներ տրված փոխառությունների գծով, որի մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 606 հազար դրամ:

26.3 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	45,921	38,110